


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
 Ե. ՓՈՐՏՈՍԵԱՆ
 Եամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ րազրի
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ՐԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹ ԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Հարեկան սպ. դրանիս	60
Վեցանիս սյ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ	
Հարեկան	20
Վեցանիս սյ	12

E. TOROSSIAN
 Direc. propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր
 ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՐԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹ ԿՍԵՆԻԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խոնքագրութեան վրայ է :

Խոնքագրութեան ուղղում
 գրութիւնի եւ չ'եւ տրուի

ԱԶԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԻՔ
 Կանխիկ վճարելի էն

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
 ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՇԱՅՈՅ
 ԱՂԻՔՍԱՆԳՐՈՅ

Թաղ . Խորհրդոյ Փոխ-Ատենապետ Վր-
 սեմ . Կարապետ Պէյ Բէյի պեան , փափաքէ-
 լով որ Աղէքսանդրիոյ Հայ հասարակու-
 թիւնը օրն օրին ճշգրիտ տեղեկութիւններ
 ունենայ Թաղ . Խորհրդոյ գործառնութեանց
 մասին ու միանգամ ընդ միշտ վերջ մը դըր-
 ուի պրոյցներէ յառաջ եկած անճշտութիւն-
 ներու կամ խեղաթիւրումներու իր պաշ-
 տօնակցաց համահաճ հաւանութեամբ որո-
 շեց յետ այսօրիկ Խորհրդոյ բոլոր կարեւոր
 որոշումները հանրութեան զեկուցանել Մա-
 մուլի միջոցաւ :

Թաղ . Խորհրդոյ վարչական անօրինու-
 թիւններէն զատ , Կողմուրդին պիտի հա-
 զորդուին նաև մանրամասն տեղեկութիւն-
 ներ ելմտական գործողութեանց և կացու-
 թեան մասին :

Թաղ . Խորհրդոյ իր բոլոր պաշտօնա-
 կան զեկուցանելը պիտի հրատարակէ միմի-
 այն ԱՐՇԱՆՈՅՍ լրագրին մէջ :
 Հրամանաւ Փոխ-Ատենապետի
 Դիւանապետ Թաղ . Խորհրդոյ
 ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Լէնկթիմուրներու և Սուլթաններու
 որով միայն չ'կոտորուիր արդուութեան ա՛յն
 ծաղիկ մասը , որոնց կորուստը մասնաւորա-
 պէս մենք հայերս վարժուած ենք ողբալ
 մերթ հրապարակաւ . միաժամանակ պատա-
 հած մեծ կորուստները աւելի յստակօրէն
 տեսնելու առակ ըլլալուս է որ , կ'անտե-
 սենք այն անհամար զոհերը , որոնք գրեթէ
 ամեն օր կը խուլին արևուն առջևէն խա-
 ւարին յանձնուելու համար

Չոհեր տգիտութեան , զոհեր անասնա-
 կան կրքի ու եսի . . . : Անհատներ ու ընտա-
 նիքներ կ'անհետանան ամեն օր մարդկային
 խելագատակի անուղիղ դատողութեանց
 պատճառով , ու եթէ հետաքրքրութեամբ
 փնտռենք այս կամ այնինչի կանխահաս
 մահուան պատճառը , պիտի հանդիպինք ա-
 նանկ սեւերես գաճաճներու , որոնք կախա-
 զանի չը յանձնուելէ զատ այլոց ցաւակցական
 ու մխիթարական խօսքերն ալ կը կորզեն :
 Կոտորածներ տեղի կ'ունենան , հայրե-

րու , մայրերու , եղբայրներու , բոյրերու ,
 զաւակներու , ազգականներու ու բարեկամ-
 ներու ձեռքով ալ , ասոնք ապերախտու-
 թեան բաժակը մէկ ումպով կը քամեն , հուսկ
 սպա զոհին հողաթմբին վրայ կոչորդիլոսի
 արցունքներ թափելու համար :

Սուլթանները կոտորեցին իրենց կեա-
 վորները , ինչու որ բայան իրաւունք չ'ունէր
 անոնց առջև խլրտալու , սասնկ ալ՝ սանց
 ա՛յն անգամները , որոնք ո՛ր է է կերպով ալ-
 դեցութիւն ունեցեր են իրենցմէ տկար ա-
 բարածներու վրայ , իրաւունք կը կարծեն
 ունենալ վարուելու իրենց տունի անգամ-
 ներուն հետ ա՛յնպէս ինչպէս անամօթ բըռ-
 նաւորներ :

Դեռ մեզմէ շատ շատերը ա՛յնքան նա-
 խապաշարուած են որ , անընդունակ են ան-
 հատական ազատութեան դաղափարը ընդ-
 գրկելու :

Ճան մը համար պատառ մը հաց տա-
 նողներ , իրենց մէջ ինքնակալի ա՛յնքան ոյժ
 կ'զգան որ , անխորհուրդօրէն կ'որոշեն ան-
 մեղներու ճակատագիրը , որով յառաջ կու-
 դան բարոյական տագնապներ , յուզումներ ,
 հիւանդութիւններ , անհամեմատ ամուսնու-
 թիւններ , այլասեռում և ըն . և ըն .

Մեր ազգին մտաւոր , բարոյական ու
 ֆիզիկական անկուճը առհասարակ կը պար-
 տինք (քաղաքական պատճառներէ զատ)
 բռնազրօսիկ ափսոսութեանց , թոյլ ու մեղկ
 կեանքի մը , որոնք այսօր մեր հայ երիտա-
 սարդութեան մեծ մասին երակներուն մէջ
 կը շրջին :

Ազգային ոյժը վերակենդանութեան կը
 կարօտի , հիմնովին քանդել պէտք է հինը
 իր բոլոր անհեթեթութիւններով :

Անհատն ու ընտանիքէ կ'սկսի բարձ-
 րանալ ազգ մը : Յառաջանալու համար իբր
 սիլզեմական միջոց չ'պէտքէ ընդունիլ խեղճ-
 ուկրակ ափսոսութիւնները , որոնց շարժա-
 ութիւր ստեղծ անբարոյական շահեր եղած են :
 Տեղ մը կը հանդիպինք օրիորդ պառաւի մը
 երիտասարդի մը ձեռքը առած . ուրիշ տեղ
 մը մագերը ներկուած խրտուիլակ մը սն-
 մեղ կոյսին մօտ կանգնած . հիւանդը ա-
 ուղջին հետ . զոյգ մը հիւանդներ քովէ քով .
 գեղեցիկը շատ տգեղին կոչքին . սոխակը
 ազաւակն ճանկին տակ , փափկասուն օրի-
 սրդ մը անուպայի մը յանձնուած . չըջանա-
 ւարտ մը տգէտի մը տրուած և գեռ ին-
 չե՛ր . մնացածը ընթերցողը կրնայ երեւակա-
 յել :

—Ամուսնութիւնը ըմբռնելու է իբր
 յօղուած անխառն սիրոյ , ընտանեկան մա-
 քուր կեանքի ու երջանկութեան :

Հարսանիքի մը հրաւիրուողներն ալ երբ
 սոյն պայմանները նորապսակներու մօտ չը
 տեսնելով հանդերձ դիւային հրճուանքով
 շնորհաւորութիւններ կ'արտասանեն , ուրիշ
 ոչինչ են , բայց եթէ քահաղիտական կամ
 տուփական եպիսկոպի շարժումներու նպաս-
 տող լպիրշ միջնորդներ . . . , որոնք իրենց
 դաւակցութեամբ մարդկային սպանդանոց-
 ները կը բազմացնեն : Ասկէ զատ՝ ասանկ
 ներդաշնակ (" ") զոյգերը ինչ պիտի նը-
 ուիրեն մեր տառապալ հայրենիքին — ու-
 չինչ — բայց եթէ մէկ մէկ թղուկներ , ո-
 ռոնք կոչում պիտի ունենան հայհոյելու
 մեր բուռ մը արի զինուորներու յիշատակին :

Մինչև ե՛րբ պիտի շարժինք ու ճշմա-
 րիտ Սպարտացիի նմանող զաւակներ հաս-
 ցընենք :

Հայը արգեօք կը սիրէ միշտ յարչի՛
 մնալ . յաւիտեան սրկիայութիւն պիտի հա-
 մարուի ասպետ դառնալը : Մեր դպրոցնե-
 րը ետ են , շատ ետ մնացած . ու բոլորովին
 անբաւարար արդի կեանքի բազմաթիւ պա-
 հանջները լեցնելու : Նա մասնաւորապէս Գահի-
 ընկեր , թողունք որ մարդ կը վախնայ ա՛լ
 իր զաւակը դպրոց զրկելու . թէ հոն ինչե՛ր
 կը պատահին , հոս տեղը չ'է գրել մանրա-
 մասնօրէն . միայն սա չափը որոշապէս աչքի
 կը զարնէ թէ տղայք բարոյապէս աւելի ին-
 կած , աւելի թմրած ու վատաւոզլ տուն կը
 դառնան , տկար զգալով ինքզինքնին կեան-
 քի նոյն իսկ սովորական պայքարը մղելու :

—Գալով այն մեծ յոյսին , որը ազգը
 իրաւունք ունի դնել երիտասարդ ուժերու
 վրայ , հանգրուան չ'գտնալով օգի մէջ առ-
 կախ կը մնայ :

Հոլանի նեխուած կուրծքեր՝ մուլթ ան-
 կիւններէ ներս աւելի դիւրաւ կը քաշեն
 մեր հայկական ախար կորսնցող կամ կոր-
 մնցնելու վրայ եզոզ անժուժկալ երիտա-
 սարդները՝ քան այն սրբազան մեծ պարտա-
 կանութիւնները , որոնք մեր վրայ կը ծան-
 րանան աշատութեան դաղափարին և արիւ-
 նաների հայրենիքի մը կողմէ :

Կոտորածներ տեղի կ'ունենան , հոս ու
 հոն . կորուստներ չ'ա՛տ . գերեզմանոցներ
 նեղ կուգան ու օճախներ կը մտնին :

Կռիւր առանց վառօգի է՝ ու դարձեալ
 կը խորդանք :

Ամօ՛թ , ամօ՛թ , ամօ՛թ :

Օ . ԹՈՒՄԱՆԵԱՆ

Գահիրէ 11 Յուլիս 1901

—*—

ՈՐՐՈՒՆԻՆ

Պ. Շ. ՇԻՇՄԱՆՆԱՆԻՆ

Սեւ, մտայն գիշեր է դուրսը ցուրտ ու խաւար... Գրեւոր մտքերն անդորրութեան ծոցըն էր ներհամ Ա. Գրեւոր... ցուրտ է դուրսը, ոտնացող քամին փոթորիկի պայտյաներով պղնձէ անօթներու անազգեցիկ ձայնով կը մանչէ...

Ինչու, ինչու է՛ այդ ցաւատանջ աղեկին լացը յաւիտենական մութ գիշերներով...

Ա՛խ անոր լացն խորհրդաւոր գիշերներով. կ'զգայ ան՝... ու զայրոյթի աղաղակով կը մըռնչէ: Երբ ոճիւրը կը թագաւորէ սանձարձակ... լիբը ու անբարոյական... ոճիւրն՝ մարդկային մութի հիւանդոտ յղացումէն վարակուած աղտոտութեամբ...

Արիւնտ օրերու սուգը դեռ թարմ էր, Ա. գրեւոր. սգոյ հրեշտակն այն տեղէն ալ սլացած էր անկարեկիր թոբիքով... կիսաւեր տներն մութ ստուերներն խորհրդաւոր կը փախային որպէս աներեւոյթ գրիներ...

Կենդանութեան շունչը իսպառ անհետացած կ'երեւէր հոնկէ...

Սեւ, մութ գիշեր էր... բայց պիւզի հաւառ արեւելեան փլատակներն մէկ անկիւնէն, վախկոտ լոյս մը կը պլպլար... օրօրուն ու շիջման հոգեւարք մօտ... չոր ամայութիւն մը ու պաղ սարսափացող խոնարհութիւն մը կը բուրբէր այդ խորհրդի ներքէն. աւերիչ ձեռքն ամեն ինչ յափշտակած, քանդած, ու հիմնադատակ ըրած էր հոն...

Տան գետնի վրայ քուրջերու մէջ դուռնատ մանկիկ մը պառկած էր. իսկ անոր քովիկն ցընցոտիներն մէջ «աղջկան մը» քրոջ մը գորովով լեցուն զոյգ աչքեր կը պլպլային... չ'էր շարժեր աղջիկը կարծես կենդանի չը լինէր... միայն անոր զոյգ աչքերն էին որ վճիռ ցուցումով մը կը պլպլային գորովի ու խանդի սարսփազող... ու մանկիկին մահին կը յանէին...

Վզ'զ'զ'... վո՛ւ... ո՛ւ... վզ'զ'զ' քամու մըռնացող ոտնոցներն, այդ կիսափուռ տունը հիմէն կը զրդէին... իսկ ճրագը լոյսն բէկ բէկ, զոր պատերուն վրայ կախուած, կարծես խոր-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն ANCH' IO SON UOMO (ԵՅ ԱՆ ՄԱՐԴ ԵՄ) (13)

—Պէ՛յ, ձեր այդ խօսքը թերեւս ճշմարտութիւն էր ժամանակ մը: Հիմայ ամեն բան փոխուած է. Ձեր վսեմութիւնը քաջ գիտէ որ պաշտօն մը՝ մանուկանդ ինքնարեւարար ստանձնուածը՝ նուիրական բան մ'է, եւ պաշտօնային զեղծմանը կը փնտսէ — թէեւ յանիրաւի — նոյն իսկ այդ պաշտօնին յարգելութեան, վսեմութեան: Արդ, քրիստոնէութեան կրօնաւորները այնքան կասկածելի ըրին իրենց պարսաճանաչութիւնը, եւ այնքան արգարացի գայթակղութեանց տեղի տուին որ թէ՛ իրենք բարոյակէս անձնասպան եղան եւ թէ՛ կրօնը անուանարկեցին. այնպէս որ այսօր խոստովանութեան կամ կրօնային մի որ եւ է էական պահանջին կարեւորութիւն տուող եւ հնազանդող գրեթէ չ'մնաց: Չ'եմ մոռնար նաեւ ըսելու որ՝ հնադարեան խոստովանանքները կնքուած գերեզմաններ էին, եւ իրենց կողմ յայտնութիւններն ոչ թէ հաճոյք այլ վիշտ եւ կսկիծ միայն կ'ստանային. վաւերի այն կրօնաւորները իրենք զիրենք պատասխանատու կը նկատէին ապականութեան ժողովուրդին, իրենց աչալուրջ խնամոց յանձնուած աստուածային աւանդին:

—Դառնանք մեր ինքորոյն Ղուկաս, —Դառնանք պէ՛յ: Մակոյիկին մէջ հազիւ

հրդար փախուքով մը, կորսուած փառքի մոխրապատ յիշատակներ յուզէին...:

Հանդարտ էր մանկիկը... պառկած էր քուրջերու մէջ աստուածանաճոյ անդորրութեամբ... փառուն ու քաղցրարօյր էր անոր գունատ երեսն:

Ա՛խ. ո՛րքան ցուրտ է մանչեց Որբունին... եւ նորէն մանկիկին նայեցաւ, ու աչքերու արտասովոր փայլով մը պատուհանէն դուրս... զէպի անհուն Եթերին սլացաւ... կարծես գնալ կ'ուզէր այն տեղ ուր վիշտը գոյուցիւն չ'ունի:

Շարժում մը ըրաւ զայրոյթի ձեւերով... ու իր աչքերուն արտասուած լճիտին մէջ, դառն օրերու մեղամաղձիկ բողբոջ կ'երեւէր...

Ձեռքը մեկնեց զէպի մանկիկին անկողինը. բռնեց անոր ցուրտէն ստա կտրած թաթիկներն եւ սեղմեց իրեն ձեռքերուն մէջ... ու իր շքնչով սաքցուց... ճակատն ու գիւսակները շոյեց ճշմարիտ քրոջ մը անհուն խանդաղատանօք ու գորովով:

Յօլա՛կ... մըմնչեց աղջիկն... ցնցուեցաւ մանկիկը... մահուան սարսուռն էր այն...:

Յօլա՛կ... իմ կաթնգին եղբայրս... ինչպէս ես անուշիկ...:

Մանկիկն հազիւ կարողացաւ զուրբ քրոջը կողմը դարձնել, եւ մանկական անմեղունակ ժպիտով մը «վերջին ժպիտն էր այն»... Ժպտեցեալ աղջկան աչքերուն մէջ... մի ինչ բան մը մտաբաց, բայց լեզուն թանձրացած էր բերնին մէջ...:

Աղջիկը ծոկեցաւ սա մանկիկն ու համբոյր մը գրօշմեց անոր գունատ աչուկներուն... գիւսակներն շոյեց եւ վերստին թաթիկները իրեն ձեռքերուն մէջ առաւ ու շնչով տաքցնել կ'ուզէր... ի դուրս... մահուան ստանութիւնը սա կաւ խանձարուած էր մանկիկան... եւ իր վերջին ժպիտն էր որ երբեմն կ'երեւէր անոր հրեշտակահամարտ ճակատին վրայ...:

Յօլա՛կ... ախ՛ իմ հոգեւոյս բովանդակութիւնը... բան մը չ'ես ուզեր... մտաւ սիրելիս... ինձ նայէ...:

Ու իր աղերսող աչքերը զէպի վեր յառած ողբաձայն աստուան խօսեցաւ... ո՛հ աստուած իմ, եղածներն բաւ չ'էին արեօք... այս վերջին միթիթարական աստղիկս ալ պիտի հանդեցնես... գթութիւն... գթութիւն... ո՛հ կը սոսկամ մտածելու թէ՛ գուցէ ոճիւրները Գո կամքով ծրագրուեցան...:

ամբած էի: որ այդ երկու գիշերաչըրջիկները եկան եւ ճիշտ մակոյիկին եղբքներուն վրայ յենած սկսան խօսակցել:

- Երջանի՛կ Ղուկաս:
—Կ'աղաչեմ, մի՛ աճապարէք, պէ՛յ. եւ գիտէք ինչ էր անոնց խօսակցութեան նիւթը: Արգար աղան...
—Ինչ կ'ըսես, բացազանչեց Գոյմապամը:
—Ճշմարտութիւնը: Երկուքն ալ մեր փախստականին քովէն կուգային:
—Ո՛րոնք էին այն անձերը:
—Մի՛ն էր՝ մարդուն կինը, իմ քոյրս...:
—Եւ միւսը՞:
—Միւսը, մօտիկ Ժիւլետէյան:
—Փրանսական հիւպատոսին թարգմանը:
—Այո՛, Արգար աղան հոն ապաստանած է:
—Թարգմանին տունը:
—Ո՛չ, հիւպատոսարանը:
Հայհոյանք մը թռաւ Գոյմապամին բերնէն:
—Գոյմար պիտի ըլլայ զայն հոնկէ հանել, գոչեց պաշտօնակալը:
—Ձեր վսեմութիւնը կը մոռնայ որ մեր Օգոստոսիան կայսեր հիսաբանչ քաղաքագիտութեան շնորհիւ այսօր հիւպատոս եւ գեսպան ամենքն ալ իրենց պատեանը քաջուելու ստիպուած են, ըսաւ փաստաբանը:
—Այդ իրաւ է. բայց ես իմ անձնակտն շահերս վտանգել չ'էի ուզեր մաքաւելով այդ հիւպատոսին գէմ, եւ կամ անոր անձնասիրութիւնը վերաւորելով:
Ղուկաս էֆէնտին չ'պատասխանեց:
—Ո՛րքան կը կարծես որ Արգար աղան կա-

Դուն՝ դուն որ արգար ես...:

Մանկիկը ճիգ մը ըրաւ, ու անմեղունակ կարեկցանքով ժպտով մը քրոջը նայեցաւ եւ լեզուն թանձրացումին մէջէն հազիւ անկապ խօսքեր դուրս թան... ա... ո... թի՛... եմ... քոյրիկ... ո՛հ. կը մտնիմ...:

Մանկան հոգեւոյն թիւր կտրեցաւ... եւ անոր թիթեւ շունչը խոնաւ միթնորոտին մէջ անհետացաւ...:

Իսկ աղջիկը, լալ կ'ուզէր բայց չ'կրցաւ... անլաց չոր աչքերն, վշտով, ստելութեամբ ու զայրոյթի անհարկով մը զէպի վեր նայեցաւ, ուր արգարութիւնը կը թագաւորէ կ'ըսեն...:

Կ. ԹԱԳԻՈՐԵԱՆ

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Հետեւեալը երկու օրինակի վերածուած «Արշալոյս» ի և «Նոր-Օր» ի զրկուած է:

Պատ. Խմբագրութիւն Նոր-Օրի Աստ

«Նոր-Օր» ի 96 եւ 97 թիւերուն մէջ կարգացի, Կիպրոսի Կրթարան-Որբանոցի մասին գրուած յօդուածները, որոց վերջինը, որ «Կիպրոսի Սպանդանոց» վերնագիրը կը կրէր, թերթի մէջ զհատուած էր իբրեւ շարունակելի մի յօդուած, այդ թիւէն ի վեր հրատարակուեցան երկու յետագայ թերթերն եւս, բայց յիշեալ յօդուածին շարունակութիւնը լոյս չ'տեսաւ:

Ես Կիպրոսի մէջ երկար ժամանակ մնացած եւ յիշեալ հաստատութեան ներքին վիճակին շատ մօտէն ծանօթ ըլլալով կը փափաքէի այդ յօդուածին շարունակութիւնը հրատարակուած տեսնել, որպէսզի հրատարակուած ապացուցանեմ թէ՛ Կիպրոսի Որբանոցը սպանդանոց է թէ՛ այդ գրութիւնը պարզապէս զրպարտութիւն:

Թ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գիտով ԱՂՋԻԿՆԵՐ. — Բարեգործական ընկերութեան մը ըրած քննութիւններով հաստատուած է որ գիտնութիւնը հսկայաքայլ կը յառաջագրիմէ Լոնտոնի գեոառօրիորդներուն մէջ:

1899 ին, քսան տարեկանէ պակաս,

րող ըլլայ անմիջապէս վճարել, եթէ մեր ձեռքն անցնի, հարցուց վրդ Պէճէթ պէ՛յ:

—Ապահովարար գիտեմ որ հազար երկու հարիւր ոսկի պատրաստ դրամ ունի:

—Այդ մեղի համար: Կուսակալին ինչ պիտի տայ:

—Թող քանի մը տուն, արտ, պարտէզ ծախէ. պէ՛յ:

—Այո՛, այո՛, ըսաւ պաշտօնակալը խոկուն —բայց կը խորհիմ որ միթէ կարելի չ'է՞ զայն վարպետութեամբ մը հիւպատոսարանէն դուրս հանել տալ, եւ փողոցին մէջ ձեռքակալել:

—Խորհիլ պէտք է...:

—Այո՛, խորհիլք: Բայց զգոյշ ալ ըլլալու է որ մարդը ձեռքէ չ'փախցնենք, ըսաւ պաշտօնակալը:

—Անչուչտ ձեր վսեմութիւնը քաջ կը յիշէ սր միեւնոյն հիւպատոսը, Փրանսական էրիտանք շոգենաւին մէջ, անհետացուց եօթը Պուլկար յեղափոխականներ, որոնք Գ. ի բերքը կը տարուէին ցիկանս դատապարտութեամբ:

—Այո՛, չ'եմ ալ մոռնար որ չորո Հայ խընովարարներ եւ քառասունէն տեւիլ գաղմղները դարձեալ նոյն անձին եւ Փրանսական շոգենաւներուն միջոցաւ եւրոպա անցան, առանց մեր երես տեսնելու:

—Հեռեւարար պէտք է զգոյշ կենալ:

—Ինչ ընենք:

—Նախ հիւպատոսարանին չորս կողմը լրբտեսներ կարգեցք. որպէսզի անցած դարձածին վրայ ստուգապէս տեղեկանանք. երկրորդ՝ ծովու վրայ, մանաւանդ Փրանսական շոգենաւներուն մեկնումին օրերը արտակարգ հսկողութիւն հրամայեցք:

(Շարունակելի) Ա. ՊԱԼԱՆ

միայն 1300 էր փողոցներու մէջ գինովու-
թեամբ ձերբակալուած աղջիկներուն թիւը-
1900ին յիշեալ թիւը 400) ր հասած է :

— Բիլիոս օմ սիս ուիֆ շարաթաթեր-
թը կը ծաղրէ ամերիկեան վերջին գիւտը
զոր կ'անուանէ « Միացեալ—նահանգները
այցելել փափաքողները շարչարելու գիւտ » :
Յիշեալ գիւտը, տեսակ մը քննութիւն է ,
որ կը կատարուի ամեն ճամբորդի մասին ,
վասան ըլլալու համար թէ հիւժարտական
որ և է հիւանդութիւն մը չ'ունի : Ո՛վ որ
այդ տեսակ արտանիշ մ'ունի չ'կրնար ցա-
մաք ելլել : Շոգեհաւային ընկերութիւննե-
րուն զեկուցած է՝ նախագէտ սեղեկանալ
իրենց ճամբորդներուն առողջական վիճա-
կին վրայ : Իրագոյն թոքախոր մանուկնե-
րութեամբ կը փոխանցուի , և յ'Ամերիկա թըք-
նելու սովորութիւնը աւելի տարածուած է
քան ուրիշ աղգերու մէջ : Չեւք առնուած
յիմարական միջոցը թոքախտէ չ'պիտի պա-
տապարէ Միացեալ—նահանգները : Բայց հոն
գացողներու մասին արդէն ի գործ դրուած
տաղտուկներուն թիւը պիտի աւելցնէ :

— « Չայն Հայրենեաց » ի մէջ կը կար-
դանք :

Տիգրանակերտէն առնուած նամակէ մը
կիմանանք որ Շամմար կոչուած ցեղի Ա-
րարները՝ որոնք Պաղտատի սահմաններէն
մինչև Տիգրանակերտի հարաւային կողմերը
ցրուած են , այս օրերս անբող աշիրէթովը
յարձակած են Իպրահիմ փաշայի աշիրէթին
վրայ (որ Համիտիյէներուն ցեղապետն ու
փաշան է) և անոնց երկիրը գրաւած են ու
Իպրահիմ փաշան ալ փախած է մինչև Տիգրա-
նակերտ : Իսկ Արարները աշխարհակալի աշ-
խոյժով յառաջ կերթան թախնելով ամեն
համիտիյէ գիւղերը և հասած են մինչև Վե-
րան Եէհիր , ու տիրած են անոր , որ Տիգ-
րանակերտէն մօտաւորապէս 16 ժամ և Սե-
ւարակէն ալ 3-4 ժամ հեռու կը գտնուի ,
և տակաւին անկէ ալ ասդին քաղել կու-
զեն : Բայց Տիգրանակերտի վիւլայէթը ի-
րար անցած գունդ գունդ զօրքեր կը զը-
կէ գէպ ի Վերան Եէհիր , և շանքի մէջ է
Արարները անկէ գէպի ետ վռնտելու , վախ-
նալով որ մի գուցէ աւելի յառաջանալով
մինչև Տիգրանակերտ հասնին , ուր առանց
Հայու կամ թուրքի նայելու հաւասարապէս
կը թախնեն ու յառաջ կերթան և մանուկնե-
րութիւնը կառավարութենէն բարկացած են
անոր համար որ իրենց ցեղապետի տղան
չլիթայակապ Տիգրանակերտ բանտարկած
էր և այժմ բաւական ժամանակէ ի վեր բան-
տէն ազատած ըլլալով աւելի անվախ կը
յառաջանան մինչև առաջ թուրք կառավա-
րութիւնը կապառնար ցեղապետին որդին
սպաննել բանտին մէջ ու անոնք կը թուա-
նային :

ԲԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱԾՈՒԽ

Ունէին՝ք մինչեւ ցարդ հայ մը որ գիտնար
մտածել թէ՛ քսուիւն ալ մեծաքանակ սպառու
կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել :
Առեւտուրի այդ սպառելին ալ օտարնե-
րուն թողուած էր :
Տիար Յակոբ Վարդանեան (Սանոսեանի
քեռորդի) այժմ ամենաբարձր անուրի վաճա-
րականութեամբ կ'գրադի և մրցում բացած է
օտարներուն դէմ :
Դիմեցէ՛ք իր միտրանոցը Սուգ-Սուտար
թիւ 17 և 18 :
Անխարդախ կշիւ և չափաւոր գին :

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիոյ աղգայիններէն Տիար
Չարէ՛՛ Սըվազի մէկ տարեկան « Արշալոյս »
կը նուիրէ Գահիրէի Հայոց նորահաստատ
Լտարան . . . Ընթերցարանին :

Տը . Հայկ նալճեան մէկ օրինակ « Վեր-
ջալոյսի ձայներ » կը նուիրէ Կիպրոսի Աղգա-
յին Որբանոցին :

**ԱՁԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ**

(ՊԱՇՏՕՆԱԿԱՆ)

Անցեալ չորեքշաբթի գիշեր , Աղէք-
սանդրիոյ Պատ. Թաղ. Խորհրդոյ Փոխ-Ատե-
նապետ Վսեմ. Կարապետ Պէյ Բէյի լեռն իր
տան մէջ շքեղ հացկերոյթ մը տուաւ ի պա-
տիւ Բարձր Խորհրդին Փոխանորդ Վսեմ Փախ-
րի բաշայի և որուն մասնակցեցան նախարար-
ները , կառավարիչը , Թաղ. նախագահ Շա-
քուր պէյ և ուրիշ բարձրաստիճան պաշտօ-
նաւորներ :

— Երկուշաբթիէն սկսեալ քաղաքիս Պօ-
ղոսեան Երկսեռ վարժարանի տարեկան հար-
ցաքննութիւնները սկսան և պիտի աւար-
տին վաղը , շաբաթ :

Գերապատիւ Առաջնորդ հայրը և մաս-
նաւոր հրաւիրեալներ և ծնողքներ ներկայ
եղան հրապարակային հարցաքննութեանց :

Առաջիկայի պիտի տրուի հարկ եղած
ժանթութիւնները , քննութեանց արդիւն-
քի մասին :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լօւնպարսիս թերթը կը ծանուցանէ թէ
ն . Բ . Խորիվը Լևոն ԺԻ . Պապին նուէր զըր-
կած է Եգիպտացի երիտասարդ կնոջ մը զը-
մբռնուած մարմինը (Մովսիս) :

Մովսիս բոլորովին անկող մնացած է
և ծածկուած է յուղարկաւորութեան մանե-
վարներովը :

Մաշարանը որուն մէջ զմռսեալ մար-
մինը զետեղուած է խորհրդանշական նկար-
ներով զարդարուած է շքեղօրէն :

— Վերջին 24 ժամուան մէջ ժանտախ-
տի դէպք մը ևս հաստատուած է Չախազիկի
մէջ :

Աղէքսանդրիոյ հիւանդանոցին մէջ խը-
նամքի տակ եղող հիւանդ մը առողջացած է :

— Տամանհուրէն կը ծանուցանեն թէ՛
տասներկու տեղացիներ ձերբակալուած են,
վերջին շաբթուան մէջ Ապու-Հոմոնի և
Տամանհուրի երկաթուղոյ գծին վրայ պա-
տահած միջադէպին իբր հեղինակներ :

— Հանրային կրթութեան նախարար
Վսեմ . Արթին Եագուպ բաշա , առաջիկայ
շաբթու ընտանեօք եւրոպա պիտի մեկնի ա-
մառուան եղանակը հոն անցնելու համար :

— Աղէքսանդրիոյ Մուհամէտ Ալիի հը-
րապարակին վրայ գտնուած պանդոկներէն
միոյն մէջ աշխատող յունական հպատակ մը
անցեալ օրեր անձնասպան եղած է Ռէվօլ-
վէրի հարուածով մը :

Այս յուսահատական արարքին պատ-
ճառները դեռ անձանթ են :

Յունական հիւպատոսարանի պաշտօնե-
ութիւնը գէպքին վայրը գնացած է քննու-
թիւն մը կատարելու համար :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Փարիզ 16 Յուլիս . — Կոմսուհի Օլգո-
վսքի Ռէվօլվէրի գնդակ մը արձակեց Հան-
րային շինութեանց նախարար Պ . Պատէնի
վրայ , երբ վերջինս կառքով էլիզէի պա-
լատը կերթար :

Նախարարին ո՛ր և է վնաս չ'հասաւ :
Կոմսուհին յայտարարած է որ կուզէր
զարնել Պ . Տէլքասէն , որուն դէմ իր ա-
մուսինը տրտունջներ ունէր :

Թիէն-Չին 16 Յուլիս . — Պօմպէի հեծ-
եալ զօրաբաժնին մեկնումը կը հերքուի :
Չինի մէջ արդի գտնուած անգղիական զօ-
րաց թիւը 1000ի պիտի բարձրանայ :

Լոնտրա 16 Յուլիս . — Տէյլի Նիւզ Օ-
տեսայէն կը տեղեկանայ թէ՛ Ելմտական
նախարար Պ . Վիթ , օգոստոսի վերջերը
Ծայրագոյն Արևելք պիտի մեկնի , և իր
ճամբորդութեան միջոցին Բէքին պիտի
այցելէ :

Պէյրութ 17 Յուլիս . — Վերջերս իբր
խռովարար ախաւոսեանեալ երեք պաշտօ-
նատարները եօթնական տարուան բանտար-
կութեան և իրենց ստացուածոց յարքունիս
դրաման դատապարտուած են : Ուրիշ եր-
կու պաշտօնատարներ ալ որ ուսական հիւ-
պատոսարանը ապաստանած էին՝ դեռ հոն
կը մնան :

Բրէթօրիա 17 Յուլիս . — Կորուստներու
ցուցակին հետեւելով , կը հասկցուի թէ ըն-
թացիկ ամսոյս 14 ին Ալիվալ Նօրթհի մօտ
Անգղիացիք 7 մեռեալ ունեցած են և ե-
րեք տեղակալ և 17 վիրաւոր-
ուած :

Կ . Պօլիս — Բէրա — 17 Յուլիս . — Ժան-
տախտի երկու նոր դէպքեր հաստատուած
են :

Ս . Բէթէրսպուրկ 17 Յուլիս . Լորտ Թօ-
լրսոյ հոգեւորքի մէջ է :

Լոնտոն 18 Յուլիս . — Լորտ Միլնէր օ-
գոստոս 10 ին նորէն Գաբ պիտի մեկնի :

Կ . Պօլիս 18 Յուլիս . — Կայսերական Ի-
րասէ մը կ'արգիլէ թուրքերուն , որպէսզի
իրենց զաւակները անգղիացի դատախարա-
կուհիներու խնամոց չ'յանձնեն :

Ս . Բէթէրսպուրկ 19 Յուլիս . — Պաշտօ-
նապէս կը ծանուցուի թէ՛ Թիպէթական
պատգամաւորութիւնը նպատակ ունի պուտ-
տայական հպատակներուն ինչ ինչ առանձ-
նաշնորհներ ապահովել :

ՀԱՅՎԱԿԱՆ ՄՐՃԱՐԱՆ

« ԿՌԱՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ , »

Էգպէթիյէ , Սըլէմաիտ պատի դէմ , Տիար
Գառնիկ Սիրուհեանի սեփականութիւնը եղող
սոյն հաստատութիւն՝ որ Գահիրէի ամենէն գե-
ղատեսիլ և ամենէն օղատուն գիւղը կը գրաւէ ,
ոչ միայն միջազգային այլ նոյն իսկ հայկական
ժամադրաւայր մը հանդիսացած է :

Սպասարկութեան մասին ցոյց տրուած փոյ-
թըն , ըմպելեաց մաքրութեան համար տարուած
խնամքն ու գիներու չափաւորութիւնը ուրիշ
ո՛չ մէկ տեղ կարելի է տեսնել : Հոն՝ ամեն ճա-
շակ իր գոհացումը կրնայ գտնել :

Օտար լիզուաւ լրագրաց հետ կը գտնուին
հայերէն ամեն թերթեր :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ հասցեով եկած նամակ-
ներն և աւանդներն անմիջապէս կը յանձնուին
իրենց տէրերուն :

Վերջապէս միայն մէկ անգամ այցելողը
կ'ընտրէ սոյն Սըմարանը ընել իր ամենօրեայ
յաճախաւայրը :

ԿՌԱՆ ՔԱՅԷ ԵՒՇԱ
Էգպէթիյէ , Սըլէմաիտ պատի դէմ

ՄԹԱՌ ԼԱՅՖ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊՍՏՈՂՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրիւն . — Ապահովագրի հետ-թեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վը-ճարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշուեյար-դարութիւն . — Եահու բաժանում ամեն Հինգ՝ ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԻՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եղիպտոսի

ՏՕՐՔԻ Ա. Յ. ԳԻՐԵՍՊԻՃԱՆ

Իր գլխինքը Եարա գլօտ-Պէյէ փոխազ-րած լինելով ի Տահէր, Եարա Պիրքէթ-Է-Բաթլը, ֆրէրներու վարժարանին գիմաց, կը ծանուցանէ իր արգոյ յաճախորդաց օր-յետ այսու իր խնամոց պէտք ունեցողնե-րը հաճին գիմել վերոյիշեալ տեղն ար կը գտնուի կէս օրէ առաջ ժամը 9-11 և կէս օրէ յետոյ 3-5 :

ԹԱՃՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉ

Ի Եարա Մոնեամէհ Աշի

Թեկվիթիէ դեղատանին դիմացի փողոցին մեջ
թիւ 7

Սոյն հաստատութեան մէջ կ'աւանդուին Մայրենի լեզու, Ֆրանսերեն, կրօնագիտութիւն և ամեն գիտութեանց սկզբունք. Օրիորդաց հա-մար ամեն տեսակ ձեռագործք :

Մտողը զո՞ւ պիտի մնան իրենց զաւակաց տրուած մասնաւոր խնամքներէն . փափաքողը կրնան դիմել ի վարժարան ամեն օր 8-11, բա-ցի կիւրակէէ :

ԿՕՇԿԱԿԱՐ

Պ. ԵՒ Յ. ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԲԱՐԻ

Պապար-Մուրուր թիւ 39

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, ոտքերը կոշտերու ցա-ւերէն ազատ պահող և դիմացկուն կոշիկ-ներ :

Իրմեյէ՞ք ի Պապար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիրեան եղ-բարց, որոնց գործածած ապրանքներու տոկոսութիւնն և ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյտէ վեր է : Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց ը-րած յանձնարարութիւնները փութով և մեծ խնամով կը պատրաստեն :

Թաւ է միայն մէկ անգամ՝ դիմել ի-րենց . ապահովագրի մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ՀՅԵՂԱՆԻ ՎԻՍՏԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ՍԻՐԱԹ 19 ՅՈՒԼԻՍ 1901

6081	2056	572	2149	3893	4180
9908	3041	3830	9808	2555	7849
6173	8640	9386	1773	5263	3316
5580	4526	5340	9844	9914	8975
	9554	3638	6692		

ՏՊԱՆՈՒԹԻՒՆ Ե. ԹՈՐՈՍԵԱՆԻ

ԳԱՌԼՕ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

ՕՐԷԼ ՄՕՆՖԵՐԱԹՕ ԱՂԵՔԱՆՂՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ հասարակութեան թէ վերջերս հաստատուած ըլլա-լով հրապարակս, կ'ընդունինք և կ'ստանձնենք ամեն տեսակ և ամեն ուղղի ապրանայ յանձ-նարարութիւնք . ինչպէս ժամացոյցի, գոնարեղենաց, արեւելեան և եւրոպական զանազան տե-սակ գունաւոր և ձերմակ քարերու, Գօլոմպիական ֆոնօկրաֆներու, ինչպէս նաեւ գրուած և անգիր խոշովակներու . — զօլան — (մեծ աքանակ) . եւրոպական նրբածիւս կողովիկներու և հո-սեղենաց :

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պօլսոյ Անտէլիպի (Մարտիրոս Պէյլէրեան) տան հետ, որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրապարակաց վը-րայ, միշտ ի միջի ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Re-producteur Andelip (ֆոնօկրաֆի ասեղ) որ անմրցելի է հրապարակին վրայ, և Գօլոմպիական ֆոնօկրաֆներու ներկայացուցիչ Մ. Պաստիօնի սքանչուցման առարկայն եղած է :

Մեր քրտմադրութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զանազան նուագներն . ինչ-պէս Մանսոյի, Բանոնի, Ուր ևն . և ֆոնօկրաֆի համար տաճկական եղանակներու վրայ չափ-ուած հին և նոր վարպետ երգողներու ընտիր Գօլաններ :

Կ'ստանձնենք կտտարել Մաքսային ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր փոխարինութեամբ :

Կը գտնանք զանազան երկրներու փոխանակ սղբեր :

Բաց աստի ընկերութիւնս Լոնտոնի, Պօլսոյ, Գահիրէի, Եաֆոյի և Երուսաղէմի մէջ թըղ-թակիցներ ունենալով, կ'ստանձնէ այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածուած և արտածուած : Մեր հասցէն է . CARLO M. BASMAJIAN et Cie . Okelle Montferato Alexandrie

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիմա՛լ Օթէլի ճեղք դիմաց , Գաֆէ Տը Լա Պուրսի կից :

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԻՐ ներն են և ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վկայականներով և մեքայլներով վաճառուած , Երաշխատեալ մեխեաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է :

ՀԱՊՌԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐԲՈՒՆԻՔԻՆ


ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ժ . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւ-րաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԻՐ ի յաւակնելին :

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ



Չրի դասեր և նորոգու-թիւններ , ՍԻՆԿԻՐ մեքենա-յից համար , յաճախորդաց առեւերուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հինմեքենայից և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՅ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-նէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գու-մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրե է ըն-կերութիւնէ մէկ միլեար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա . յացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխա-ւորութիւններ , ընդարձակ գործառ-նութիւններ և հրապարակի վրայ ա-ւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գործէ :

ԱԼԼԻՔՈՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար , Մեքենայի Բիւրօ :